

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԶԵՌՆԱՐԿԵԼ ՄԻՋՈՑՆԵՐ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՄ ԻՐ ՎՍՏԱՀՈՐԴԻ ՀԵՏ ՆՈՒՅՆԱՑՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

28.03.2014 07:04

ՀՀ փաստաբանների պալատում երեկ՝ մարտի 27-ին, տեղի է ունեցել ակումբի նիստ, որտեղ քննարկվել են քայլեր ուղղված վերջին շրջանում փաստաբանների հանդեպ վիրավորական խոսքեր հնչեցնելու և փաստաբանին իր վստահորդի հետ նույնացնելու կանխարգելմանը: Հանդիպմանը մասնակցել են շուրջ երեսուն փաստաբաններ, այդ թվում՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը, ակումբի համակարգող Մելանյա Առուստամյանը, խորհրդի անդամներ Կարեն Մեժլումյանը, Մարտուն Փանոսյանը, Նիկոլայ Բաղդասարյանը և Երվանդ Վարոսյանը, ինչպես նաև Նորայր Նորիկյանը, Ռուբեն Բալոյանը, Գեղամ Հակոբյանը, Աղավնի Մադոյանը, Մարինե Ֆարմանյանը, Տաթևիկ Շալջյանը, Երեմ Սարգսյանը, Մարինե Թովմասյանը, Վահե Հովհաննիսյանը, Արա Զաքարյանը, Արսեն Սարգարյանը, Վարուժան Վարդանյանը, Միհրան Պողոսյանը: Ներկա փաստաբանները հանդես եկան տարբեր տեսակետներով և առաջարկություններով:

Մասնակիցները փաստել են, որ նման իրավիճակն անթույլատրելի է և պետք ձեռնարկվեն միջոցներ դրանք կանխարգելելու ուղղությամբ:

Քննարկման արդյունքում որոշվել է.

- դիմել դատական իշխանությանը՝ կլոր սեղան կազմակերպելու առաջարկով, նկատի ունենալով այն, որ դատավորները կարող են և պարտավոր են ապահովել դատական նիստի բնականոն ընթացքը և դատավարության մասնակիցներին պաշտպանել այլ անձանց ոտնձգություններից.

- փաստաբաններին հորդորել նմանատիպ իրավիճակներում՝ հնարավոր միջոցներով կանխել իրենց վստահորդների կողմից վիրավորական գործողությունները մյուս կողմի փաստաբանների նկատմամբ.

- վերապատրաստման դասընթացներում ներառել այս իրավիճակներում փաստաբանների վարքագծի դրսևորման վերաբերյալ թեմաներ:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```